պայմաններից, անհիմն է համարում նաև Հայցվորի դիրքորոշումներն առ այն, որ Հայցվորը ծանրաբեռնվել է ձևական պահանջներով:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>6. Դատական ծախսեր և հայցի ապահովում.</u>

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանը գտնում է, որ հայցը մերժվելու արդյունքում դատական ծախսը պետք է կրի Հայցվոր կողմը, և հաշվի անելով պետական տուրքի նախապես վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

**ՎՃՌԵՑ**

1. Թիվ ԵԴ2/19862/02/23 քաղաքացիական գործով «ՊՐՈ ՇԻՆ» ՍՊԸ-ի հայցը մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** **ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ**